ՎԱՆԱՅ ԲԱՆԱՀԻԻՍՈՒԹԻՒՆԻՑ

Ա. Սոլաքեանի

ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Կան այսպիսի աւանդութիւններ Գրիգոր Նարեկացիի և ուրիշ սուրբերու կեանքին վրայ։ Ասոնցմէ օրինակի համար Նարեկացւոյն տեսիլը, կերպով մը, համազգային բնաւորութիւն ունի, աւանդութիւնը ծանօթ լինելով ամեն կողմ։

Գրիգոր Նարեկացին ուր աղօթկատեղաց մէջ, կիշեր ցերեկ կ'ուլէր կ'աղօթէր, էն կանտար որ քարեր մաշան ուր ծնկներայ տակ։ Ինոր խնդիրքն էն էր մէյ խատ ուր աչքով տեսնէր մայր Աստածածին, Յիսուսը՝ կիրկ։ Շատ տարի գիշեր ցերեկ իլաց աղաղակեց. չէօք զարկած կետնի քարերաց վէրէն, կժերով արտասունք թափելով... Մէյ կիշեր էլ նակեախտան տէսաւ. որ Վանայ ծովու երկնուց լոս ըմ կաթաւ. պարակ քամիմ՝ փչեց և մայր Աստածածին երևաց տիմացի կղզու վերէն, ուր կըրկանոցը՝ կիրկ։ Նարեկացին ևը տեսաւ ասաց, «Առ՝ Տէր խոկիս, առ մըկա. քանի որ ես իմ փափակին խասայ»։ Տեսիլք վէրցաւ և էտա կղզու անուն մնաց «Առտէր»։

ԱՂՕԹՔՆԵՐ

I

Հա, ել, հա ել, Լուսնեակ, հա ել,
Լուսնակը պակը պոլորե. 1)
Պակ պոլորե պատարագին,
Երթանք մտնենք եկեղեցին
Կըլոխ տընենք Աստածածին.
Տանկով զարկինք դուռը պացինք
Մտանք ներս աղօց կացինք
Մեղաւորներս նստան լացին
Արտըսընքով ծիյվեր 2) լացին։

II

Կաթնով աղբիւր քարէ տաճար
Էրթանք անենք վարձ վաճառ.
Աստած անի մեր խուկին 3) ճար։

III

Իսուսը սուն ի սրտիս
Աւէտարան ի կըրկիս.
Իմ Տէր, արարեր զիս
Զը մերձենան չարերը զիս։

---

1) Լուսնի բակ ունենալը։ 2) Ծնկներ. 3) Հոգուն։

ՎԻՃԱԿԻ ԽԱՂԵՐ ԵՒ ԵՐԳԵՐ

Վիճակն ի հէօլա հէօլա 1)
Աղապ լաճեր վիճկին քէօլա 2)
Ջան վիճակ ջան ջան,
Ազպրներ քե կուրպան։
Վիճակ նստէ վէր պատին,
Աղապ լաճեր վէր լակին 3)
Ջան վիճակ ջան ջան,
Ջանըս քե ղուրպան։
Վիճակ նստէ վէր իշուն.
Ռզապ լաճեր վիճի շուն.
Ջան վիճակ ջան ջան,
Ջահրլներ քե ղուրպան։

—

Էս օր ի Խամպառծըման կիրակին
Խամպառծումտիլաքդ 4) կատարի
Խարս խան վիճակըն բարի։

—

Ծով քե գինի, կեամին 5) քե կթխայ 6).
Տիւ լից, տիւ խմի, Աստուած քի կուտայ։

—

Ժանկռոտ 7) մախաթ 8) քե վռվ 9)
խասրաթ։ 10)

—

Պառցեր ես կաթար. 11)
Կերթաս Աղթամար.
Սըբ խաչայ խամար.
Սըբ խաչ տայ քե լաճ
Անուն Մըխիթար.
Ոսկի ուրուրոց, մարկըրտէ ծածկոց,
Առնես կան կեաս 12) վէր արարածոց։

—

Զի ծաւ չինարի պիտէր
Մէջ Վանայ դաշտին պիւսնէր.
Ճողեր Արտաւել թալէր,
Խով անէր՝ Ոստան ծածկէր,
Ոստան քե ոսկի կուպայ 13)
Պանձրաշէն արևն վերէն
Ջըղըղէր ջրիկն առջևէն։

—

Մէր կիրե խաւըրծիլ՝
Տըղէն պիրե ոսկի ծիլ։

—

Մէր կիրե ծուաղեղ՝
Տղէն պիրե կոր անծեղ։

—

Լոյսը կուսին, սըբ խաչայ Լուսնին,
Պոլըրաւ ի վեր, տեսն էր խընկին,
Պաժնիկ պատրու 14) նըմանի,
Սուրաթ 15) կըլաթ խընձորի,
Աչքեր կանթեղ նըմանի,
Եկեղեցուց կը կախուի։

—

Պէօշ 16) պաղըրկեան 17) իկեր ի՝
Մեր կալատեղ թափեր 18) ի՝
Թօփով 19) կութնին 20) պիրեր ի՝
Չինար պաժիս 21) լայեղ 22) ի՝
Սըրմա քամար 23) պիրեր ի՝
Պարակ մէջքիս խամար ի։

Բացատր. բառեր՝—1՝ հէօլա հէօլա—ազատ ման գալու իմաստով։ 2՝ քէօլա—թրք. ծառայ։ 3՝ Լակ—կերակուրի աւելորդ։ 4՝ Տիլաք—խնդիր։ 5՝ կեամի—թրք. հաւ։ 6՝ կթխայ—բաժակ։ 7՝ Ժանկռոտ—ժանգոտ։ 8՝ Մախաթ—մեծ ասեղ։ 9՝ Խասրաթ՝ թրք.—կարօտ 11՝ Կաթար՝ թրք.—ջորի։ 12՝ Կան կեաս—Պտտիս։ 13՝ Կուպա՝ թրք.—կամար։ 14՝ Սուրաթ՝ թրք.—դէմք։ 16 Պէօշ—բազմաթիւ—բազմանդամ։ 17՝ Պաղըրկեան՝ թրք.—վաճառական։ 18՝ Թափեր ի. Թափել—իջևանելու մտքով։ 19՝ Թօփ. թրք—ծրար։ 20՝ Կութնի—մետաքսեայ տեսակ մը գործուած։ 21՝ Պաժ—հասակ։ 22՝ Լայեղ. թրք.—արժանի։ 23՝ Քամար՝ թրք. գօտի։

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԳԵՐ

Մանկական խաղեր և երգեր շատ ու շատ են, անոնք կրնան բաժնուիլ մի քանի մասերու, խաղ—զբօսանքներ. խաղի խօսքեր, բնութեան և կենդանիներուն կամ թռչուններուն ուղղուած խօսքեր, զբաղումի խօսքեր։

Զբօսանքներ իմ գրուածի նիւթ չեն կազմեր։

Խաղի խօսքեր, այս, շատ անգամ անիմաստ, խօսքեր են, որ բառ բառ, կամ վանկ առ վանկ ըսուելով խաղցողներու վրայ բաժնուելով, կորոշեն, մէկի, կամ մէկ խումբին՝ խաղի մէջ «ներս» կամ «դուրս» մնալը.

Այսպէս են.

Աղուտ կուտ կըր—կուտ
Ելանք սարեր զընկըլ կուտ.
Ջանիկ մանիկ, դաստայ կիւլեկ
Դը—հան—պուտ։

—

Ակալ տուկալ տումաղ ա.
Շամամ տօտիկ լավէղ ա.
Եղներ մեղներ կուլպատ ա
Ճան, ճուկ, թաֆ։

—

Խարսներ դիր են—Քէօշկի կուպէն՝
Ի՞նչ են պիրե—Լաճ ու աղնեկ՝
Անուն ի՞նչ ի—Ջանգակ պամբակ։

Երեխայք մէկ ընդ մէջ իրարու ձեռքի բոյթ մատերը բռնելով և սիւնեակ մը կազմելով կը շարժեն վեր ու վար և կըսեն հետևեալ խօսքերը.

Օփինա. տրօմփինա.
Խաչ դաւազան վռօշինայ.
Աղէն կասի վերէն քաշէք,
Տըկեն կենայ.

Ամեն անգամուն վերէն կամ վարէն մէկ ձեռք կը քաշեն մինչև մնայ միայն մէկ հատ։

— Իսկ հետևեալ խօսքեր կըսեն ձեռքերնուն երեսի կաշիէն երկու մատով բռնելով և վերջ իրարու վիզ կտիկ, խուտուտ ընելով.

Ճըւեկ ճըւեկ, ակլա ճըւեկ
Աղէն կընաց Խրուսաղէմ,
Գիւրթ իպե, պամպակ չեպե,
Շալ արաց շլվար չարաց,
Ուրն արաց, լաճուն չարաց,
Թուռ ճուճուղեկ. կըտիկ կտիկ։

Մէկը փոքրիկ առարկայ մը կը պահէ մէկ ձեռքին մէջ և երկու ձեռքերը կը ներկայացնէ դիմացինին. սա կըսէ հետևեալ խօսքերը, իւրաքանչիւր վանկին իւր մատը անոր մէկ ձեռքին վրայ դնելով, վերջին վանկը որ ձեռքին ելնայ զայն բանալ կուտայ տեսնելու թէ «խիլը» (շիւղ) գտաւ թէ՝ ոչ։

Ալնես պալնես.
Հաւատամ սուրբ Սարգիս,
Խիլ խան տուր զիս։

—

Տղայք լայն տեղէ մը ցատկելէ առաջ կըսեն շատ
Ճնճղուկ, ճնճղուկ իմ լեղին առ քեզ անգամ
Քո լեղին տու զիկ։

Բարեկենդանին ամէն տուն առաստաղի գիրանէն կախած կունենայ աւանդական չուանէ ճղօրը—կախօրան, որու մէջ օրօրուած, սլացած ժամանակ կըսեն, կերգեն հետևեալը.

Քրուֆ քրուֆ տարա,
Ես էլայ պերդի պարա,
Կանչեցի տէր Զաքարա,
Խունկ ու մոմ հաղէր արա,
Իրեկուն խրթում արա,
Առատուն պաշտօն արա,
Քրու էնա պուճախ. քրու էնա պուճախ
Մեր քաւորանց մեղրի պուճախ։

Բնութեան, թռչուններուն ուղղուած խօսքերէն յիշենք հետևեալները.

ԱՐԵԻՒՆ

Արև, արև, դուրս էլի.
Քո խէր ու մէր. իկեր ի.
Ոսկի դանակ պիրեր ի.
Խով ծառի տակ թաղեր ի.
Խօվիւն եկե տեսէր ի.
Տէրտէրն էկե օխներ ի։

ԱՆՁՐԵԻՒՆ

Անձրև կուկայ տալտալա.
Պաժիդ մեռնեմ Մարկարա։

ԱՔԱՂԱՂԻՆ

Կռուկլռուկռուկռու սանամէր.
Մէ խաւրմ կէր դիր կընաց.
Ծարաւ աղբիւր ջուր կընաց.

ՈՒՐՈՒՐԻՆ

Կորցնեմ, տղէդ կուլայ
Ճանկմ չամիչ պէ որ չի լայ։

ԲԼԲՈՒԼԻՆ

Բլպուլն ասաց Ումպրեկ խաւքուն՝
Ինչի՞ կուլաս կուց կուց արուն՝
Արի առնեմ քե վէր իմ թեքերուն՝
Տանեմ վէր պանձրիկ սարերուն
Շինենք տնիկ մէջ քարերուն.
Դուռը պանանք հարաւ քամուն.
Ջէնը կուկայ գառն ու մագուն։

ԿԱՏՈՒԻՆ

Կատու, կատու, կանափրտու.
Ո՞ւստ կուկաս — Արտամետու.
Ի՞նչ կայ քամակդ — Ջոր պըկըկու։
Խարսներ դ՞ր են — վէր ոսկի թախ-թին.
Ապա կխըրնե՞ր — վէր ցըռոտ ցա-խուելին։

ԵՐԵԽԱՆԵՐՈՒ ԳՈՎՔԵՐ

Լաճու մօր տարէք օտէն ջամ փէնճարա (Թրք. ապակլի պատուհան)
Լաճ ի պիրի, լաճ։
Աղջկայ մօր տարէք փակեախ (ախոռ) կու (աղբ) աւիլէ
Քած ի պիրի, քած.
Լաճու մօր տարէք իկին վարդեր քաղի,
Լաճ ի պիրի, լաճ։
Աղջկայ մօր սոխ իւստըկի աչք կըծուըծայ,
Քած ի պիրի, քած։
Լաճու մօր տուէք շարպաթ անուշ խըմի,
Լաճ ի պիրի, լաճ.
Աղջկայ մօր տուէք պաղ լակ անխամ վըռօչ,
Քած ի պիրի, քած։
Լաճու մօր պիրէք զարպաֆ կուլթնի, ոսկի,
Լաճ ի պիրի, լաճ.
Աղջկայ մօր անըրվա կըտաւ, չիթ և բերդեր (կեղծ ոսկի)
Քած ի պիրի, քած։
Լաճու մօր կալօշ բօթին, ճըտնոց, քամար (մանեակ)
Լաճ ի պիրի, լաճ,
Աղջկայ մօր մաղէ լատան, անտակ սօլեր
Քած ի պիրի, քած։

ՄԱՆՉ ՆՐՆԽԱՑԻՆ

Աչքերացդ սեւ ըստան,
Աչքապերացդ շահ կիւլըստան,
Ասլան ձկներ խետ քե խաղան,
Կագըւնէր խետ քե կըրվըրան.
Խալալա խալ էր տըղէն,
Արծըթէ թառ էր տըղէն,
Տառ չինարին աղէն էր.
Չինար պաժին (հասակ) մամէն էր։
Ծըլի ճըլտուզ (մանր-մունր)
մօրքըրներ.
Վարդ ս'ըռըհան խօրքըրներ.
Քանձ քաֆուր վարդ քեռկինքներ։

—

Խալալա խալ կին սեւ
Ըռէսի խարսին սեւ,
Թող քո աղջիկ տանէս չելնէր՝
. . . . . ին աչքով չանէր։

—

Տօ տղա, լաճ, կապէդ կարեմ կարճ,
Կօճկըներդ շարեմ խաչ
Վով քե կասի ումպըրիկը շատ,
(կեանք, Թրք. «էօմր»-էն)
Ուր դուռ կայնի քառսուն մշակ.
Վով քե կեսաէ ումպըրիկը կարճ,
Ուր տունը տեղ տար պըրիշակ։

—

Խալալա, լաճ կէր մամուն,
Զին խէծնէր էրթէր էօրտիւն,
(բանակ. պատերազմ Թրք.)
Սարի (Թրք. դեղին) լաչին պի-
րէր մամուն,
Սարի մըխմէլ (սեւան կանանց
գլխի) խաթիւն մամուն,
Կինդը Թօռ պիրէր կընոջ,
Ալ դարահին (սնգուր) խաթուն
քիւրոջ
Ոսկի քամար ուր խօր քըրոջ։

ԱՂՋԻԿ ՆՐՆԽԱՑԻ ԳՈՎՔԸ

Կըճատիկ արուխ մարուխ,
Կըճատ թիւքերդ վեր վերու,
Սարէ սար կայ էրթալու,
Սուսուն ծաղիկ կայ քաղելու,
Քո քաւուրոջ օրոխկելու,
Թառ ըմ տիւ Թոռմ քո քաւոր,
Թառոջ խաթճ՛ւն էր քաւորկին։

—

Աղջիկը տամ ը քընջան՝
Ձեռքերը կէր ալ մըռջան,
Զիանք փակեախ խրխնջան՝
Լաճերը տուն վըրվընջան։

Ջան մարալ, ջա՜ն, ես աղբիւր եմ դու ջուր ես,
Ջան մարալ ջան, ես չըղչըղամ դու խըմես.
Ջան մարալ ջան, ջաղցի առուն ջուր կուգէր.
Ջան մարալ ջան, աղջիկ լաճուն տիւր1 կուգէր.
Ջան մարալ ջան, ջաղցի դռներ տաշուկ2 էր.
Ջան մարալ ջան, աղջիկ լաճուն պաշխուկ էր.
Ջան մարալ ջան, ջաղցի դռնէն ընցայ ես.
Ջան մարալ ջան, անձրեն խզար3 թըջուայ ես.
Ջան մարալ ջան, արեն առեց չորցայ ես.
Ջան մարալ ջան, չանց քաֆուր վարդ պացուայ ես.
Ջան մարալ ջան, ջան Սօնէ ջան.
Դեղին գօգնոցով աղջիկ,
Ջան մարալ ջան, ջան Սօնէ ջան,
Քո խօրն առա քե տա ձիկ.
Ջան մարալ ջան, ջան Սօնէ ջան,
Ծօ տղա՜ տղա՜ խեցալով4,
Ջան մարալ ջան, ջան Սօնէ ջան,
Իմ խէր քե աղջիկ չի տայ
Ջան մարալ..
Իմ խէր ղի թագ ի պախե
Ջան...
Վանայ խօգին ի պախե։
Ջան մարալ ջան, ջան Սօնէ ջան
Սարէն կուգամ, ձորէն տիւ.
Ջան մարալ...
Տիկ ես շըլկեմ, տըկճոր5 տիւ.
Ջան մարալ...
Սիր ես ուտեմ կարագ տիւ։

Ինչ առօգութիւն և բնականութիւն կայ սիրերգերու հետեւեալ բեկորներու մէջ.

Լէլէնամա՜ն Մեր տուն ձեր տուն դիմաց դիմաց.
Խէրի՜ք անեմ աչքով իմաց.
Լաչին տու դէն, երեսդ պաց։
Լէլէ եամա՜ն.
Դիւ պըստիկ ես, պարունակես,
Մէջ իմ սրտին գիւ ծաղկեր ես.
Կամ Վարդ մ'ի պատե վարդովըրնան կիրակին
Քո սէրն ինկե մէջ իմ սրտի պուրակին։

1) Ախորժելի։ 2) Տաշուած։ 3) Ջարկաւ։ 4) Թըք.— երազկոտ մտամոլոր։ 5) Փոքր տիկ։

Ս Ի Ր Ե Ր Գ

Թէ որ, մխ անեմ, պէնէս կէ՛լնի պոց,
Թէ որ մխ չանեմ չիկեարս կ՛էլնի խոց.
Թէ որ սրտիս դարդերն ասեմ,
Ապառաժ քարեր կը պատռեն—*)
Սիրտն իմ քան ըղկուժն ի կոտրե.
Քանի որ ջուր լնում կու տանի.
Ով իմ արարիչ Աստուած,
Մի առներ ի մահ իմ սիրուս
Իմ մահ պատերազմ արա
Մէջ խողար Թափած Թրերոց.
Մարդ որ պատերազմ մեռնի, պարտ է վերայ վանք շինելոյ
Մարդ հասրաԹով մեռնի. չի պատի ի հող Թաղելոյ։
Կեանքս աշխարհէս՝անցաւ
Բայց մենակ Աստուածին ունիմ յոյս,
Ակն ունիմ արժան առնէ,
Տեսանել ազնիւ սիրելոյս,
Ո՜հ կանեմ արիւն կուգայ շատ լալուց հոգոց հանելուց
Այնչափ մխ վմխ արի ես,
Վախենամ ելնեմ աչուերուցս։

*) Վար.
Աչերս իբրև զամպն ի ուռե
Երեսէս ի վար կու Թափի։

ՊԱՆԴՈՒԽՏԻ ԵՐԳ

Ես պուլպուլուն խաւքն եմ շարով,
Ջում՛ ածիցի խազար զօրով.
Գոնին ասի ախւ կաց պարով,
Ես լէ կերԹամ խազար տարով։

ՎՇՏԻ ԵՒ ԿԱՐՕՏԻ ՄՐՄՈՒՆՋՆԵՐ

Էնքան «մխ» արի, Ախիկ չի սերեց.
Արի Թէ Թարգի Փալակն աւիրեց։

—

Էրանեկ քի պախչի պլպուլ,
Որ չես տեսի ջիգրի մռմուռ,
Թէ որ տեսնաս ջիգրի մռմուռ,
Կը թափի քո սըրտա փիտուր։

—

Երկինքն ի ամպէ կուգայ մարմար ձիւն,
Կուգայ կը թափի վէր մալուլ մարդուն,
Մաշտէնք ես եմ մալուլ՝ թէ աշխար պիթուն։

ՊԱՐԵՐԳՆԵՐ

Ա.

Հոյ նարէ, հոյ նար, հոյ նար, հոյ նարէ.
Հոյ նարէ, չախըրկի ոտ կէօ ուռ էր,
Հոյ նարէ, չախրակ մանող կէօ ծուռ էր։
Հոյ նարէ, հոյ նար, հոյ նար, հոյ նարէ.
Հոյ նարէ, չախըրկի ոտ կէօ նուշ էր.
Հոյ նարէ, չախրակ մանող անուշ էր։
Հոյ նարէ, հոյ նար, հոյ նար, հոյ նարէ.
Հոյ նարէ, չախըրկի ոտ փըշոտ էր.
Հոյ նարէ, չախրակ մանող շվշատ էր։
Հոյ նարէ հոյ նար...
Հոյ նարէ, չախըրկի ոտ կէօ բարտ էր.
Հոյ նարէ, չախրակ մանող նամարդ էր։
Հոյ նարէ հոյ...
Հոյ նարէ, չախըրկի ոտ կէօ թեղ էր.
Հոյ նարէ, չախրակ մանող կանթեղ էր.
Հոյ նարէ հոյ ..
Հոյ նարէ, չախըրկի ոտ կէօ տանձ էր.
Հոյ նարէ, չախրակ մանող կուտան ձիկ։

Բ.

—Ջեմ, ջեմ, ջեմ, ջեմ, ջեմ, ջեմ կանայ խաղայ,
—Էն ինչիդ ծանրութենէն, չես կանայ խաղայ.
—Էն եաղմիս ծանրութենէն չեմ կանայ խաղայ.
—Եաղմէն խան տիւ տիր դրհան ել կայնի խաղայ։

—Ջեմ, ջեմ, ջեմ, ջեմ, ջեմ, ջեմ կանայ խաղայ.
—Էն ինչիդ ծանրութենէն չես կանայ խաղայ.

—Ճըտնոցիս ծանրութենէն չեմ կանայ խաղայ.
—Ճտնոց խաւն տիւ տիր դըհան եւ կայնի խաղայ։

—Չեմ, չեմ, չեմ, չեմ, չեմ, չեմ կանայ խաղայ.
—Էն ինչի՞դ ծանրութենւն չես կանայ խաղայ.
—Փալթոյիս ծանրութենէն չես կանայ խաղայ.
—Փալթօն խան տիւ տիր դըհան եւ կայնի խաղայ։

—Չեմ, չեմ, չեմ, չեմ, չիմ, չեմ կանայ խաղայ.
—Էն ինչի՞դ ծանրութենէն չես կանայ խաղայ.
—Ցըստանիս ծանրութենէն չեմ կանայ խաղայ.
—Ցըստան հան տիւ տիր դըշհան դու կայնի խաղայ։

Գ. ԼԱԼՈՒԽԱՆ

Պէպիկ մի բէլե Լալուխան
Փուշ կէլնի տոտիկ Լալուխան
Արծըթէ կօտիկ Լալուխան
Էրթանք Ըստամպօլ »
Պիրենք ոսկի պօլ »
Առնինք ջուխտըմ սօլ »
Խայնինք տօրէ տօր »

Էրթանք Պըստիկ Գեղ »
Առնենք նուկի մ'եղ »
Շինենք ծուազեղ »
Ուտենք միատեղ »

Էրթանք Էրէրին. »
Ոչխար վեր պէրին. »
Կըթենք թուխ մագին, »
Լըցենք սիւրահին. »
Ոչխար մոլըրաւ. »
Խովիւ խըռովաւ »
Ո՜ ճ ճ ճ ճ ճ ճ ճ ճ ճ։

Դ.

Համ կիւլ, համ վարդ, համ Նարկիզ,
Կէօլի կռունկ էրկէն վիզ.

Պապо, մամо, կարդա զիս,
Թարգի մարդու մի տա զիս,
Ասեղ խշթա ծակա զիս.
Համ կիւլ, համ վարդ, համ նարգիզ,
Կեօլի կռունկ երգէն վիզ,
Պապо, մամо, կարդա զիս,
Թթիջար մարդու մի տա զիս,
Կեազ կը չափի մոռնայ զիս։
Համ կիւլ, համ վարդ, համ նարկիզ,
Կէօլի կռունկ էրկէն վիզ,
Պապо, մամо, կարդա զիս,
Սօլկար մարդու մի տա զիս,
Առնի խերուն ծակա զիս։
Համ կիւլ, համ վարդ...
Վարժապետի մի տա զիս,
Գիրք կը կարդա մոռնայ զիս։
Համ կիւլ...
Խիյաք մարդու կէօ դու զիս
Թալի մըքիւք պագա զիս,
Խորէն էլնի գըրկա զիս։

Դ.

Մէ պըստըկիկ խայիկ ըմ կէր,
Անապատայ վանք կը ՏՆէր,
Օր կորեկէ խաց ըմ կուտէր,
Կէսն աղքատաց բաժին խանէր,
Պէպիկ ոտնով փուշ կը քաղէր,
Զըլուտ քամկով կեազ կը կըրէր։
Օրն էր շապաթ լուս կիրակին,
Պաժկին պայսաւ պատարագին.
Զում Վան քաղաք մէյլար կ'ացին.
Զորս անօթի քիւրտ առին դէմ.
Մէյն ասաց զանենք թիւլցուցենք.
Մէյն ասաց զանենք կուրցուցենք.
Նէ թիւլցուցենք, նէ կուրցուցենք
Տաճկըցուցինք, անենք մօլա.
Մե լազըմ չի խայ քախանայ,
Մե լազըմ ի տաճկի մօլա։
Օ՛, ճ օ օ օ օ օ ճ օ օ.

Ե.

Էս օր մեր տէրտէր զիկ ասաց.
Ինչ խօրօտիկ գը·խիկ մ' ունես.
Ես էլ մեր տէրտրոջն ասացի.
Կոդիկ մը պե դընեմ վերէն։
Էսօր մեր տէրտէր զիկ ասաց.
Ինչ խօրօտիկ աչքեր մ' ունես.
Ես էլ մեր տէրտրոջն ասացի.
Տեղտիր մը պե քաշեմ յինե։
Էս օր մեր տէրտէր զիկ ասաց.
Ինչ խօրօտիկ քըթիկ մ' ունես.
Ես էլ մեր տէրտրոջն ասացի.
Խրզմէ մը պե ընցուցեմ յինէ։
Էսօր մեր տէրտէր զիկ ասաց.
Ինչ խօրօտիկ վրզիկ մ'ունես.
Ես էլ մեր տէրտրոջն ասացի.
Ճըտնոց մը պե կապեմ վէրեն։
Էս օր մեր տէրտէր զիկ ասաց.
Ինչ խօրօտիկ ձեռքեր մ' ունես.
Ես էլ մեր տէրտրոջն ասացի.
Ինէ մը պե դընեմ ինե։
Էս օր մեր տէրտէր զիկ ասաց.
Ինչ խօրօտիկ մատներ մ' ունես.
Ես էլ մեր տէրտրոջն ասացի.
Մատնիկ մը պէր մտուցեմ ինե։
Էսօր մեր տէրտէր զիկ ասաց.
Ինչ խօրօտիկ շախկամ մ'ունես.
Ես էլ մեր տէրտրոջն ասացի.
Զախու մը պե քեղեմ ուտես։

Զ.

—Խայու աղջիկ, բաղդդ եմ ինկե,
Ծամերդ տեսնամ, մխ մի փախե.
—Խորած խեղդուած ծուռ քուռ եթիմ,
Ոսկի պըռղամ դիւ չեմ տիսե։
—Խայու աղջիկ, բաղդդ եմ ինկե,
Աչքերդ տեսնամ, մխ մի փախե.
—Խորած խեղդուած սէրխոշ եէթիմ

Զինի կթխա դու չՔս տիսե։
—Խայու աղջիկ, բաղդդ եմ ինկե,
Իրեսդ տեսնամ, ախ մի փախե.
Խորած խեղդուած ծուռ քոռ տղայ,
Կարմիր խնձոր տիւ չՔս տիսե։
—Խայու աղջիկ, բաղդդ եմ ինկե,
Պէրանդ տեսնամ, ախ մի փախե.
—Խորած խեղդուած սավդալի ծուռ,
Նոր պացուած վարդ տիւ չՔս տիսե.
—Խայու աղջիկ, բաղդդ եմ ինկե,
Քիթդդ տեսնամ, ախ մի փախե.
—Խորած խեղդուած ծուռ քոռ տղայ,
Կեալնոյի զոռնէն տիւ չՔս տիսե.
—Խայու աղջիկ, բաղդդ եմ ինկե,
Ծրծերդ տեսնամ, ախ, մի փախե.
—Ջանիդ մեռնիմ խորոտ տղայ,
Անուշ շամամ տիւ չՔս տիսե.
—Խայու աղջիկ, բաղդդ եմ ինկե,
Պաժրդ տեսնամ, ախ մի փախե.
—Պաժրս մատաղ անուշ տղին,
Զինարի ծառ տիւ չՔս տիսե.
—Խայու աղջիկ, բաղդդ եմ ինկե,
Մէջքրդ գրկեմ, ախ մի փախե.
—Մէջքիդ կուրպան, ախ, ծուռ տրղայ,
Վախն ինչ պան ի, տիւ չՔս գիտե։

ՀԵՔԻԱԹ

ԳՈՂ ԾԵՐՈՒԿԸ

Կէլնի, կելնի, կէլնի կէլնի, մել խատ աղքատ խալիւորը։ Էսա խալիւորը մէկ իրուկուն կ՝էլնի կէրթայ դուռ մը կը տփի. ներսանց կ՝ասեն՝ «վովի». կասի. «Աղքատ պապիկն եմ, տուն տեղ չունեմ. ծե մեռնեմ, դուռ պացէք, դիշերս ձեր տուն, ձեր պակի մէջ պառկեմ, առատուն էլնեմ էրթամ»։ Տան տղէյներ կասին. «Մարէ, խեղճ ի, թող կեայ ներս, փողան ինչխ ենայ»։ Դէ տղէք, թող կեա։ Եր ներս կուգայ՝ տղէյներ որ կը տեսնան պապիկ կուրախնան կասեն. Մարէ, թող կեայ նստի թորվան վէրէն, ինչ կելնի»- Մէր տղէյներաց խաթրից չէլնի. կը պերի խալիւորը կը նստուցի վէր թորվան։ Տղէյներն կը թափեն կող կուշտ, կասեն. «Պապիկ, մի խէքիաթ ասա»։ Էսոր միտք զաթի չար էր, ներս մտնելուն

պէս չորս տեղ Թահմին արիր էր թէ ինչ կէր օր գիշեր գողնէր փախէր։ Էն օր տուն լուաց արեր ին փռեր ին շրտներաց վերէն, կերեր թողերքին թօնէր, պապիկ ուր ոտնով ափլփեց իմցաւ, գիտէր թէ նդոնք ուրենց փարէն ական մէջն են պախե, գիտէր որ փայխի մէջն էլ էշըմ կէր։ Խալիւոր էսա զմէն տեսեր էր, միտքն էլ խօրօտ աւիրեր էր, դաթի գուղութնի խամար եկեր էր։ Եր տղէյներ շատ աղատան թէ մէ խէքաթ ասա՝ էն կեախ պապիկը էլ ասաց.

Խէքեաթ խէքեաթ պապս ա. թօրվան միջին փորս ա. ական մէջին՝ ծոցս ա. շրդէ շրիտ քամակս ա. տաշտաքուրակ տակս ա. իրեկուան ծաղր՝ առատման լաց։

Տղէյներ կփկփացին էսա խօրօտ խէքթի վերէն, պապիկն է նա կասէր, կը կրկնէր իրեկուան ծաղր առատման լաց։ Մարդ չէր գիտե թէ էտա խէքեաթ ուրենց խամար էր։

Եր հըմէն կնացին քնան, խալիւոր թողին տանդուն օր թօրվան վերէն քնի։

Պապիկն էր մէնակ մնալուն պէս, էլաւ թոնէրն իպաց՝ կերերն իխան ղըմէն կերաւ, ական մէջի փարէք իդեր ծոց, լուացի շորեր շրտներով կապեց եթալ քամակ, մտաւ փակեախ էշն առցըկեց իխան դիւս. խէծաւ, դուռն իպաց, եավաշմ քաշեց վերա եալլա էլ կշեց գնաց, հալա կերթայ...

Առատան եր վեր էլան տէսան որ ինչ. պապիկ ուր արածն արե. իրեկուան ծաղր առատման լաց էղաւ։

ՇՈՒՏԱՄԵԼՈՒԿՆԵՐ

Քեռի, արի էրթանք Քուէլ,
Էլ առնենք էն Քուիլայ լօռ ալբրէն։
Ուլն էլաւ ուռի ծառ,
Ուլն ուր ոռով ուռն ոլբրեց։
Մե կայ տաս կարմիր պառկ.
Հըմէն պառկի պէնին տաս կարմիր պառկակապ.
Ձե էլ կանչ տաս կարմիր պառկ,
Հըմէն պառկի պէնին տաս կարմիր պառկակապ։
Մեր փակեախ (ախոռ) կան պէշ պօշ պօշ պէկեր
Ձեր փակեախն էլ կանն պէշ պօշ պօշ պէկեր.
Մեր իկին կայ տաս տանձի ծառ. զմէն տանձի ծառի ծէռի վիրէն կայ տաս ղիտր ծանտր տանձ. ձեր իկին կանչ տաս տանձի ծառ...

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Խանելուկ խանդակելուկ,
Մէջն ուտելու դիւս թալելու։
(Ձմերուկ).

Ի՞նչ ի. Որ առնեմ ձեռս՝ կուլայ.
Որ դնեմ գետին ձայն կը կտրի։
(Սաղ)

—

Ի՞նչ ի. Որ կը կապեմ կը վազի՝
Որ արձկեմ կը կենայ։
(Տրեխ).

—

Պոլատ կտել կպե պատ։
(Կողպէնք).

—

—Ասեմ արի՛ արի՛, չի գայ. Ասեմ «մի՛ գայ», կու գայ։
(Շրթունք)

—

—Թաղի վեր պատին կը վազի (Մկրատ)

—

—Երկնուց եէլչի (դեսպան) մ՝ իջաւ ոտ չկէր։
Օր էրկու ոչխար կուտէր՝ լիզու չկէր.
Ջի մը կէր տակ, խոկի չկէր.
(Նորածին, ատինքներ, օրօրոց)։

—

—Մե ծառըմ կայ ճճան ի (ճիւղերը խառն)
Ճճանի տակ մէյտան ի (—Թրք. հրապարակ)
Մէյտանի տակ կթխա ի (բաժակ)
Կթխի տակ զուռնա ի.
Զուռնի տակ մարագ ի.
Մարագն ի լիք ուրագ ի։ (—լեզուն)
(Մարդ)
Կարմիր կով տակ կը պռա՝ Սևը՝ վեր
(Բոց և ծուխ)

—

Էրկէն աղջիկ շուքը չկայ (Ջրհոր)

—

Էրկէն սօղան պարակ փօղան
Կուզ Մարկարէն կէրթայ կուգա } Ջրհոր և Ջրհանաման

———

ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Աստծու օխնութեն առնես.
Աստուած քե շատ արև տայ.
Աստծու պէրան օխնի քե.
Ծլես ծախկես. հօթ որդու սեղան նստես.
Հայր Ապրահամու օխնեթքն առնես.
Զօրանաս. Զեռդ քար թալիս ոսկի դառնայ.
Աստուած շատ խաց տայ.
Էրկեն արև էլնես.
Վատ օր չտեսնաս.
Բարով ուրախութենով սրտիդ մուրազին խասնիս.
Աստուած ամօթալիք չանի.
Աստծու աչք, ձեռ վիրեդ էլնի.

(տօնի առթիւ)

Ամէն տարի բարով էս օր խասնիս, ուրախ սրտով,
ցամաք աչքով։
Հին նոր, տիւշմնի աչքը կօր (նոր զգեստի առթիւ.)

ԱՆԷԾՔՆԵՐ

Խեղդուած.
Վարամ թալած. վարամոտած.
Կրողի տարած. մախ քե խորդի.
Աստուածածնի եարէն առնես.
Տիրամօր եարաւոր.
Սև խակած.—Սև կապած.—Սև լերթ.
Աստծու կրակին ռաստ կեաս.
Կրող մտնի փորդ.
Սատանէն տանի քո կերպարանք.
Թափթփոտես, կապելու ծուռ.
Ծայծէյվիս։ Անքուն որդ ինի ջանդ.
Խէր չտեսնաս. վաստակդ սատանին էլնի.
Ջանիցդ դեղին ջիւր էրթայ.
Աստուած քե ճռ տայ, եղունգ չի տայ։